

# Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

**1879 հունվար 1** Մկրտիչ Փորթուզայանի նախաձեռնությամբ Վանում բացվեց Վարժապետանոց:

**ապրիլ 11** Կ. Պոլսում հիմնվեց Ազգանվեր հայուհյաց ընկերությունը:

**ապրիլ 16** Մոսկվայում մահացավ հայտնի հրապարակախոս «Յուսիսափայլի» խմբագիր Ստեփանոս Նազարյանը: (Ծնվ. 1812թ.-ին):

**ապրիլ 17** Կ. Պոլսում վախճանվեց տպարանատեր, հրատարակիչ ճամիկ Արամյանը: (Ծնվ. 1820թ.-ին):

**ապրիլ 26** Վախճանվեց «Յուսիսափայլ» ամսագրի հիմնադիր, անվանի հրապարակախոս և լուսավորիչ Ստեփանոս Նազարյանը

**հունիս 23** Ծնվեց հայ քիմիկոս Ստեփան Դամբարյանը: (Վախճ. 1948թ.-ին):

**հոկտեմբեր 1** Երևանում բացվեց առաջին քաղաքային խորհուրդը:

**դեկտեմբեր 16** Ալեքսանդրապոլում ծնվեց հայ նշանավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը: (Վախճ. 1950թ.-ին):

**դեկտեմբեր 26** Ծնվեց հայ կոմպոզիտոր, իրավաբան, երաժշտական հասարակական գործիչ Արմեն Տիգրանյանը: (Վախճ. 1950թ.-ին):

**1880 փետրվար 7** Նոր Նախիջևանում ծնվեց նկարիչ Մարտիրոս Սարյանը: (Վախճ. 1972թ.-ին):

**մարտ 9** Թիֆլիսում հիմնադրվեց Հայոց հրատարակչական ընկերությունը:

**մարտ 15** Երևանում լույս տեսավ առաջին պարբերականը՝ «Պսակ» շաբաթաթերթը Վասակ Պապաջանյանի խմբագրությամբ:

**ապրիլ 8** Թիֆլիսում վախճանվեց Գաբրիել Այվազովսկին: (Ծնվ. 1810թ.-ին, Թեոդոսիայում):

**հունիս 1** Կ. Պոլսի Արարատյան, Դպրոցասիրաց-Արևելյան և Կիլիկյան հայկական բարեգործական ընկերությունները միավորվեցին «Միացյալ ընկերությունը հայոց» անունով՝ Մ. Չերազի և Ա. Արփիարյանի ղեկավարությամբ:

**օգոստոս 30** Բ. Դռան հրամանով արգելվեց «Հայաստան» անվան օգտագործումը պաշտոնական գրություններում:

**1881 մայիս 3** Խաչատուր Կերեքյանի նախաձեռնությամբ Կարինում հիմնադրվեց «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը:

**հուլիս 6** Թիֆլիսում հիմնվեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը»:

**հուլիս 6** Բժիշկ Բագրատ Նավասարդյանի և դրամատուրգ Քաբրիել Սունդուկյանի ջանքերով Թիֆլիսում ստեղծվեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը»:

**հուլիս 9** Բժիշկ Լևոն Տիգրանյանի խմբագրությամբ Երևանում լույս տեսավ «Առողջապահական թերթիկ» ամսագիրը:

**հոկտեմբեր 1** Կարինում հիմնադրվեց Սանասարյան վարժարանը:

**նոյեմբեր 1** Բացվեց Երևանի ուսուցչական սեմինարիան:

**նոյեմբեր 8** Նոր Նախիջևանի թեմական դպրոցի բացումը:

**1882 հունվար 9** Կ. Պոլսում վախճանվեց պատմաբան, հայագետ Հովսեփ Գաբրիելյանը: (Ծնվ. 1820թ.-ին):

**փետրվար 21** Թիֆլիսում լույս տեսավ «Արձագանք» լրագիրը Աբգար Հովհաննիսյանի խմբագրությամբ:

**հուլիս 7** Ծաղկաձորում ծնվեց խորհրդային ականավոր գիտնական, ակադեմիկոս Լևոն Օրբելին: (Վախճ. 1958թ.-ին, Պետերբուրգում (Լենինգրադում):

**օգոստոս 20** Թիֆլիսում բացվեց Կովկասի հայոց ուսուցիչների առաջին ընդհանուր ժողովը:

**սեպտեմբեր 17** Մահացավ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ն (IV-ը):

**1883 հունվար 13** Թիֆլիսում լույս տեսավ արևելահայ առաջին մանկական պատկերազարդ ամսագիրը՝ «Աղբյուրը» Տիգրան Նազարյանի խմբագրությամբ:

(Հարատևեց մինչև 1918թ.):

**մայիս 8** Գործարկվեց Թիֆլիս-Բաքու երկաթգիծը:

**սեպտեմբեր 19** Ծնվեց հայ կոմպոզիտոր, իրավաբան Ռոմանոս Մելիքյանը: (Վախճ. 1935թ.-ին):

**դեկտեմբեր 20** Թիֆլիսում լույս տեսավ «Նոր դար» լրագիրը Սպանդար Սպանդարյանի խմբագրությամբ:

**1884 հունվար 2** Պետերբուրգում կայացած պետական խորհրդակցությունը ընդունեց հայկական եկեղեցական դպրոցների նոր կանոններ, որոնք անկաշկանդ միջամտության իրավունք էին տալիս պետական մարմիններին:

**հունվար 2** Կ. Պոլսում լույս տեսավ «Արևելք» օրաթերթը:

**ապրիլ 20** Ծնվեց հայ բանաստեղծ, գրական հասարակական գործիչ Դանիել Վարուժանը: (Վախճ. 1915թ.-ին)

**հունիս 13** Թուրքական հարկային ռեֆորմի դեմ ապստամբություն բռնկվեց Ջեթունում քաղաքագլուխ Պապիկ իշխանի ղեկավարությամբ:

**հոկտեմբեր 26** Մահացավ Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը: (Ծնվ. 1837թ.-ին):

(Շարունակելի)

# Լուրեր

## Իրանահայ համայն

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սպահանի հայոց թեմի 49-րդ Պատգամաւորական ժողովը, գումարեալ 26 առ 28 յունւարի 2005 թ.-ին, նախ քննարկեց Կրօնական եւ Թեմական խորհուրդների, ինչպէս նաեւ Հաշւեքննիչ մարմնի միամեայ նիւթական ու բարոյական գործունեութիւնը եւ հանեց համապատասխան բանաձեւեր՝ նրանց գործունեութեան շուրջ եւ ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսի կողմից յղած ընտրելիների եռամուսն ցանկից միաձայնութեամբ ընտրեց ԳԵՐՊ. Տ. ԲԱԲԳԷՆ Ծ. ՎՐԴ. ԶԱՐԵԱՆ-ին որպէս Սպահանի հայոց թեմի առաջնորդ:



ԴԻՒԱՆ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

### 13-րդ Պատգամաւորական ժողովն ընտրեց Թեմական խորհուրդ եւ Հաշւեքննիչ մարմին

Հաղորդագրութիւն

Այսու ուրախութեամբ յայտնում ենք, որ Թեհրանի հայոց թեմի 13-րդ շրջանի Պատգամաւորական ժողովը իր 22, 23, 24, 26 եւ 28 փետրւարի նիստերում քննարկեց թեմիս Կրօնական ու Թեմական խորհուրդների եւ Հաշւեքննիչ մարմնի երկամեայ բարոյական ու նիւթական զեկոյցները եւ ներկայացած բարոյական ու նիւթական տեղեկագրերը հանգամանօրէն քննարկելուց յետոյ՝ յստակ բանաձեւերով գնահատեց կատարած աշխատանքները: Երեքշաբթի, մարտի 1-ին, իր վերջին նիստում, 13-րդ շրջանի Պատգամաւորական ժողովը ի ներկայութեան ներքին գործոց նախարարութեան փոքրամասնութեան բաժնի պատասխանատու պրն. Ալի Մոհամմադզադէի եւ գաղտնի, եւ բաց քւէարկութեամբ կատարեց Թեմական խորհրդի եւ Հաշւեքննիչ մարմնի ընտրութիւնները.

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Պրն. Նորայր Արամեան  
Պրն. Եսայի Աբրահամեան  
Պրն. Վահիկ Աղաքեան  
Պրն. Իսրայէլ-Իսիկ Ստեփանեան  
Պրն. Յարութիւն Աբնուսի  
Տկն. Անետ Բաղդասարեան  
Պրն. Ժիրայր Նազարեան  
Պրն. Սերգէյ Բարսեղեան  
Պրն. Համիկ Մարգարեան  
Դոկտ. Ռազմիկ Յովհաննիսեան  
Պրն. Վիգէն Գալստեան

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՄԱՐՄԻՆ  
Պրն. Թադէ Յարութիւնեան  
Պրն. Վահիկ Դառուսի  
Պրն. Հենրիկ Սաֆարեան  
Պրն. Ռոմէլ Յարութիւնեան  
Պրն. Նելսոն Վարդանեան  
Պրն. Մասիս Մկրտումեան  
Պրն. Մայիս Աբրահամեան  
Պրն. Հենրի Ջուակիմ  
Պրն. Օննիկ Օրբէլեան

ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Նկատի ունենալով, որ թեմիս կանոնադրութեան մէջ Կրօնական խորհրդի կազմութիւնը չի նախատեսուել եւ միւս կողմից էլ նկատի ունենալով ազգային եկեղեցական մեր կառոյցում Կրօնական խորհրդի պահանջն ու առանցքային դերը, հետեւելով նախորդ երկու շրջանների ընկալեալ սովորութեան՝ թեմիս առաջնորդ Սրբազան Հայրը Պատգամաւորական ժողովին ներկայացրեց թեմիս Կրօնական խորհրդի կազմը՝ առ ի գիտութիւն եւ նկատառումն ցնոր տնօրինութիւն:  
ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Արժ. Տ. Վարագդատ աւ. քինյ. Տէրտէրեան  
Արժ. Տ. Վազգէն քինյ. Շմաւոնեան  
Արժ. Տ. Արսէն քինյ. Աւետեան  
Արժ. Տ. Մեսրոպ քինյ. Ռաթնոսեան  
Արժ. Տ. Կոմիտաս քինյ. Դարախանեան  
Արժ. Տ. Մաշտոց քինյ. Խաչատրեան  
Արժ. Տ. Արշէն քինյ. Յարութիւնեան  
Շնորհաւորում ենք նորակազմ մարմիններին եւ եկեղեցանւեր, ազգաշէն եւ ժողովրդանւեր բեղուն գործունեութիւն ենք ցանկանում բոլորին:

ԴԻՒԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

## Իրան

### Կարեն Նազարյանը նշանակվել է Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ դեսպան

ԵՐԵՎԱՆ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով ԱԳ նախարարի խորհրդական Կարեն Նազարյանը նշանակվել է Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի դեսպան:

Կ. Նազարյանը ծնվել է 1966 թվականի նոյեմբերի 29-ին, Երեւանում:

1990 թ. ավարտել է ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետը՝ բանասեր եւ արեւելագետ մասնագիտացմամբ:

1992 թ. սովորել եւ ավարտել է ՌԴ ԱԳՆ դիվանագիտական



ակադեմիան:

Կ. Նազարյանը ՀՀ ԱԳՆ համակարգում է 1991 թվականից, աշխատել է ռազմաքաղաքական խնդիրների վարչությունում:

1992-1994թթ. պաշտոնավարել է Ռուսաստանում ԶՅ ղեկավարությունում:

1994-1996 թթ. եղել է ԶՅ ԱԳՆ քարտուղարության պետ, աշխատակազմի ղեկավար:

1996-2002 թթ. գործուղվել է ժնեւ, որպես ՄԱԿ-ի գրասենյակում ԶՅ ղեկավար, մշտական ներկայացուցիչ:

Եղել է ՄԱԿ-ի հովանու ներքո անցկացվող եւ միջազգային այլ կազմակերպությունների կողմից հրավիրված համաժողովներում, վեհաժողովներում ԶՅ պատվիրակությունների ղեկավար, Ռասիզմի, ռասայական խտրականության, քսենոֆոբիայի եւ անհանդուրժողականության դեմ համաշխարհային համաժողովի փոխնախագահ:

2002-ից առ այսօր զբաղեցրել է ԶՅ ԱԳ նախարարի խորհրդակցական պաշտոնը, այդ ընթացքում լինելով Զայ ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի անդամ:

Ունի արտակարգ եւ լիազոր դեսպանի դիվանագիտական հաստիճան:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

## ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ՈՒՂՎԱԾ ԶԵՆ ԸՆԴԴԵՍ ԱՂԻԲԵԶԱՆԻ

Բաքվում Իրանի դեսպան Ավշար Սուլեյմանին աղրբեջանական «Day.az» ինտերնետային թերթին տված հարցազրույցում ասել է, որ հայ-իրանական հարաբերություններն ուղղված չեն ընդդեմ Աղրբեջանի: Ավելին, դեսպանն ընդգծել է, որ հայ-իրանական կապերը կարող են լինել ի նպաստ Աղրբեջանի, քանի որ Իրանը՝ լավ հարաբերություններ ունենալով Զայաստանի հետ, կարող է նպաստել դարաբաղյան հակամարտության կարգավորմանը:

Դեսպան Սուլեյմանին ասել է, որ Իրան-Զայաստան գազամուղի նախագիծը Թեհրանը չի օգտագործի ի վնաս Աղրբեջանի: «Իրանի եւ Զայաստանի միջեւ գազամուղի կառուցման նախագիծը ձգվելու է մինչեւ 2007 թ.: Այդ ընթացքում տարածաշրջանում կարող են փոփոխություններ տեղի ունենալ, մասնավորապես կարող են լուծվել Զայաստանի եւ Աղրբեջանի միջեւ առկա խնդիրները», ասել է նա:

## Հայաստան

*Իրանը Զայաստանին կապող երկրորդ ճանապարհի կառուցմանը պետքույժեցից այս տարի հատկացվել է շուրջ 6 մլրդ դրամ*

ԵՐԵՎԱՆ, 23 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 2005թ.-ին պետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար նախատեսվում է հատկացնել 12,3 մլրդ դրամ, որից շուրջ 6 մլրդ դրամը կուղղվի Իրանը Զայաստանին կապող երկրորդ՝ Կապան-Ծավ-Մեղրի ավտոմոբիլային հաղորդակցության ուղու կառուցմանը: «Զայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ» պետական ոչ առեւտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Զակար Պետրոսյանի խոսքերով, այս ճանապարհը հնարավորություն կտա տնտեսապես

խնայողություններ կատարել, միաժամանակ այն կարելի է երթեւեկության անվտանգության ապահովման տեսանկյունից: Սա ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհ է, որը ոչ միայն կապահովի Զայաստանի եւ Իրանի բեռնաշրջանառությունը, այլեւ տարանցիկ ճանապարհ կհանդիսանա Իրանից դեպի Վրաստան: Ներկայումս գործող Մեղրի-Քաջարան-Կապան ճանապարհը կառուցել է միայն տեղական նշանակության հաղորդակցություն ապահովելու համար, սակայն այժմ այն միջպետական նշանակության ճանապարհ է համարվում: Անվտանգության տեսանկյունից եւս ճանապարհը խոցելի է, քանի որ գտնվում է լինանցքի հյուսիսային մասում եւ ձմռանը դժվարանցանելի է, ավելի հաճախ՝ պարզապես փակվում է:

Կապան-Քաջարան-Մեղրի ճանապարհի ծովի մակերեսային առավելագույն բարձրությունը 2483 մ է, իսկ Կապան-Ծավ-Մեղրի ճանապարհինը կլինի 2005մ: Եթե առաջին ճանապարհի նվազագույն շառավիղը կազմում է 15մ ապա, երկրորդինը կկազմի 52 մ: Ի տարբերությունը երկրորդ ճանապարհի, որը ուղորաններ չունի, առաջին ճանապարհը 8 ուղորան ունի:

Կառուցվող ճանապարհը 19կմ-ով երկար է գործող ճանապարհից, սակայն եթե առաջին ճանապարհով մեկ մեքենայի միջին արագությունը կազմում է 34,2 կմ/ժ, իսկ միջին երթեւեկի արագությունը՝ 2 ժամ 8 րոպե, ապա երկրորդինը, համապատասխանաբար՝ 55,4կմ/ժ եւ 1ժամ 40 րոպե: Խնայված 28 րոպեի համար բեռնափոխադրողների կորուստները կնվազեցվեն տարեկան 165 հազար դոլարով, իսկ վառելիքի ծախսի խնայողությունները կարող կազմել 1 մլն 100 հազար դոլար:

Նախատեսվում է կառուցել միայն նոր ճանապարհի վերիշեն-Ծավ 35 կմ ճանապարհահատվածը, իսկ ճանապարհի նմացած հատվածները կհիմնանորոգվեն: Շուրջ 90 կմ երկարության ճանապարհը շահագործման կհանձնվի 2007թ.-ին: Շինարարության համար 2006թ.-ի պետական բյուջեով եւս ակնկալվում է ստանալ 3 մլրդ դրամ: Զ. Պետրոսյանի խոսքերով, ներդրումների հետզման ժամկետը 12 տարի է:

Նա տեղեկացրեց, որ մրցույթի բոլոր փաստաթղթերն արդեն ներկայացված են Պետական գնումների գործակալություն եւ առաջիկա օրերին կհայտարարվի միջազգային մրցույթ, որը նախատեսվում է ավարտել մինչեւ ապրիլ: Այնուհետեւ, կսկսվի ճանապարհի շինարարությունը:

Ըստ Զ. Պետրոսյանի, այլընտրանքային այս ճանապարհը վճարովի չի դառնա:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ԵՐԿԱԾՈՒՂԱՅԻՆ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ԻՐԱՆԻ ԴԵՏ

Իրանի հետ երկաթուղային կապ հաստատելու՝ Զայաստանի մտադրության մասին է հայտարարել կիրակի օրը տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, հաղորդում է «Ազատությունը»: Ըստ «Ատոշիթեդ պրեսի», կառավարությունը մշակել է Զայաստանի տարածքով մինչեւ Մեղրի ձգվող երկու երկաթուղիների կառուցման ծրագիր: Մանուկյանն ասել է, թե դրանցից առաջինը կարժենա 760, մյուսը՝ 900

միլիոն դոլար: Նախարարը չի նշել, թե ֆինանսապես ոչ այնքան հարուստ Հայաստանը որտեղից կարող է հայթայթել երկաթուղու կառուցման համար անհրաժեշտ գումարները: Կառավարության մի պաշտոնյա, որը չի ցանկացել նշել իր անունը, ասել է, թե նախագծի ֆինանսավորման որոշ չափն իրենց վրա կարող են վերցնել Իրանը եւ Եվրոպան:

**Աշոտ Քոչարյանը՝ Հնդկաստանում ՀՀ դեսպան**

ԵՐԵՎԱՆ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Աշոտ Քոչարյանը նշանակվել է Հնդկաստանում Հայաստանի դեսպան:

Աշոտ Քոչարյանը ծնվել է 1957թ. հունիսի 8-ին Երեւանում: 1979թ. ավարտել է Վ. Բրյուսովի անվան օտար եւ ռուսաց լեզուների ինստիտուտը՝ անգլերեն եւ ռուսերեն լեզու ու գրականություն մասնագիտացմամբ:

1979-1984թթ. աշխատել է միջնակարգ կրթության համակարգում: 1984թ. - 1986թ. աշխատել է Իրաքում, որպես թարգմանիչ:

1987-1990թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1991-1992թթ. նույն ինստիտուտում աշխատել է որպես գիտքարտուղար:

1992թ. աշխատանքի է անցել ՀՀ ԱԳՆ-ում եւ մինչեւ 2003թ. պաշտոնավարել ԱԳՆ ռազմաքաղաքական, Եվրոպական երկրների եւ միջազգային կազմակերպությունների վարչություններում:

Ավարտել է Վիեննայի դիվանագիտական ակադեմիայի եւ Հաագայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի հատուկ դիվանագիտական դասընթացները:

1997-1999թթ. աշխատել է Վիեննայում՝ ՀՀ դեսպանությունում, որպես 1-ին քարտուղար: 1999թ. նշանակվել է ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության խորհրդական, միաժամանակ ղեկավարելով մարդու իրավունքների բաժինը: 2002թ.- 2003թթ. ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետն է եղել:

2003 թ. մայիսից մինչեւ 2005 թ. փետրվար եղել է ՀՀ նախագահի մամուլի քարտուղարը: Ունի արտակարգ դեսպանորդ եւ լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան:

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու է՝ թեկնածուական թեզը պատերազմի եւ խաղաղության հարցերով պաշտպանել է 1990թ:

1988-2000թթ. դասավանդել է Հայաստանի տարբեր կրթական հաստատություններում:

Միջազգային հարաբերությունների եւ մարդու իրավունքների ոլորտներին վերաբերող տպագրված մի շարք հոդվածների եւ թարգմանությունների հեղինակ է:

Ազատ տիրապետում է հայերեն, ռուսերեն եւ անգլերեն

լեզուներին:  
Անունացած է, ունի երկու որդի:

**ՀՀ կառավարությունում տեղի է ունեցել Ֆրանսիայում 2006-2007թթ. անցկացվելիք Հայաստանի տարվա նախապատրաստական աշխատանքները համակարգող պետական հանձնաժողովի նիստ**

ԵՐԵՎԱՆ, 22 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր կառավարությունում տեղի է ունեցել Ֆրանսիայի Հանրապետությունում 2006-2007թթ. անցկացվելիք Հայաստանի տարվա նախապատրաստական աշխատանքները համակարգող պետական հանձնաժողովի նիստ, որը վարել է հանձնաժողովի նախագահ, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Ինչպես հայտնեցին կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, Ֆրանսիայում Հայաստանի տարվա հանձնակատար, ՀՀ նախագահի խորհրդական Վիգեն Սարգսյանը ներկայացրել է նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքը: Հանձնաժողովի անդամները եւս զեկուցել են անցկացվելիք միջոցառումների ծրագրի նախապատրաստական աշխատանքների մասին, որոնցում կներառվեն բազմաթիվ հանդիսություններ, մշակութային միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, համերգներ, ձեռագրերի ու գրքերի ցուցադրություններ եւ այլն: Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Ալեքսանդր Հարությունյանը նշել է, որ արդեն իսկ որոշակի բանակցություններ են ընթացել Հայաստանի տարվա շրջանակներում Ֆրանսիայի իրենց գործընկերների հետ՝ նախատեսված միջոցառումների լուսաբանման եւ տեղեկատվության ապահովման վերաբերյալ:

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանն ընդգծել է, որ Ֆրանսիայում առաջին անգամ երկու երկրների նախագահների հովանու ներքո Հայաստանի տարվա անցկացումը ոչ միայն Հայաստանի ու Ֆրանսիայի միջեւ հարաբերությունների, հայ-ֆրանսիական բարեկամության լավագույն ապացույցներից է, այլև Ֆրանսիայի միջոցով Հայաստանը՝ նրա պատմությունն ու ներկան, ազգային ու մշակութային արժեքները Եվրոպային եւ աշխարհին ներկայացնելու եւս մի լավագույն հնարավորություն: Նա նշել է, որ Ֆրանսիայում եղած օրերին հանդիպումներ եւ զրույցներ է ունեցել Հայաստանի տարվա միջոցառումները նախապատրաստող պատասխանատուների հետ, հստակեցրել որոշակի խնդիրներ:

Անդրանիկ Մարգարյանը հանձնարարել է, մեկ շաբաթյա ժամկետում, ըստ ներկայացված միջոցառումների ծրագրի նախագծի, Հայաստանի տարվա հանձնակատարին առաջարկներ ներկայացնել հանձնաժողովի շրջանակներում աշխատանքային խմբերի ձևավորման, դրանց գործունեության մասին, որոնք ավելի ուշ կքննարկվեն նաեւ վարչապետի մոտ: Նիստում անդրադարձ է եղել նախատեսված միջոցառումների ֆինանսական ապահովման խնդիրներին եւս:

**ՀՀ կառավարությունում տեղի է ունեցել Մեսրոպյան գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված հոբելյանական հանձնաժողովի նիստ**

ԵՐԵՎԱՆ, 22 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր կառավարությունում տեղի է ունեցել Մեսրոպյան գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված հոբելյանական հանձնաժողովի նիստ, որը վարել է հանձնաժողովի նախագահ, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

Ինչպես հայտնեցին կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունից, հանձնաժողովը քննարկել է նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքը: Ձեկուցվել է, որ հաշվի առնելով հոբելյանական ծրագրով նախատեսված միջոցառումների վերաբերյալ արված բոլոր դիտողություններն ու առաջարկությունները, ամփոփվել են քննարկման արդյունքները, մշակվել է ծրագրի ամբողջական տարբերակը:

Ի կատարումն հանձնարարականի, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Յուլիա Յուլեյանը ներկայացրել է Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայանալիք հոբելյանական երեկոյի, Մեսրոպ Մաշտոցի վերադարձը հայրենիք պատկերող «Գրոց երթ» թատերականացված ներկայացման, Օշականում Թարգմանչաց օրվա և մի շարք այլ զանգվածային մշակութային միջոցառումների սցենարները: Հանձնաժողովի անդամները քննարկել են հաստատել են նաև ծրագրով նախատեսված երկու տասնյակից ավելի հոբելյանական այլ միջոցառումները, այդ թվում հայագիտական միջազգային գիտաժողովի, գիտաստեղծագործական համաժողովի, Ասունքի հանրապետական փառատոնի, «Տեղեկատվական տեխնոլոգիաները և հայ գրերը» թեմայով էլեկտրոնային գիտաժողովի, Հայ գրերի ցուցահանդեսի կազմակերպում, Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքի (4 լեզուներով), գրերի գյուտին նվիրված Հրաչյա Աճառյանի աշխատության, «Ձոն հայոց լեզվին» խորագրով բանաստեղծությունների ժողովածուի հրատարակում, Երեւանի Նորքի 2-րդ զանգվածում «Գրոց պարտեզ» այգու հիմնում և այլն:

Նիստում զեկուցվել է, որ ԼՂՀ կառավարությունը ևս որոշում է ընդունել Մեսրոպյան գրերի գյուտի 1600-ամյակի տոնակատարության միջոցառումների անցկացման մասին, հաստատվել է հոբելյանական հանձնաժողովի կազմը: Ըստ մշակված ծրագրի, Արցախում կկազմակերպվեն Ամարասի դպրոցի և Մեսրոպյան գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված գիտամշակութային միջոցառումներ, միջազգային գիտաժողով, հայերեն և ռուսերեն կիրատարակվի «Արցախի կրթական կյանքի 1600-ամյա տարեգրությունը» աշխատությունը: Տեղի կունենան նաև գիտական ու մշակութային այլ միջոցառումներ:

ՀՀ վարչապետի խորհրդակցական Ստեփան Մարգարյանը ներկայացրել է Ջավախքում անցկացվելիք հոբելյանական միջոցառումների ծրագիրը, որով նախատեսվում են, մասնավորապես, Վրաստանի հայկական դպրոցներում գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված շաբաթի, Թբիլիսիում «Մեսրոպյան գրերի գյուտը» խորագրով վիրահայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսի, Ախալքալաքում հոբելյանական հանդիսավոր երեկոյի կազմակերպում, Ջավախքի դպրոցների պատմությանը

նվիրված գիտական ժողովածուի հրատարակում և այլ միջոցառումներ:

Նիստում հաստատվել է նաև Մեսրոպյան գրերի գյուտի 1600-ամյակի հոբելյանական խորհրդանշանը: Միջոցառումներին զուգահեռ հանձնաժողովը քննարկել է դրանց ֆինանսական ապահովման խնդիրները, առանձին միջոցառումների համար տրվել են համապատասխան հանձնարարականներ:

## Միջազգային

### «ԲՈՒՈՐԸ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՆ, ՈՐ ՂԱՐԱԲԱՂԸ ԶԻ ԿԱՐՈՂ ՎԵՐԱԴԱՐՉՎԵՆ ԱՂՐԲԵՋԱՆԻՆ»



### Ջոն Էվանսն Օսմանյան Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածը որակել է «ցեղասպանություն»

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈՐՅԱՆ

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսն, ըստ «Մեդիամաքս» գործակալության, փետրվարի 19-ին հայտարարել է, որ չնայած ԱՄՆ-ի վարած պետությունների տարածքային ամբողջականության ճանաչման քաղաքականությանը, «բոլորը հասկանում են, որ Ղարաբաղը չի կարող վերադարձվել Ադրբեջանին, քանի որ դա աղետալի քայլ կլինի»:

Սան Ֆրանցիսկոյի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ դեսպան Էվանսն ասել է, որ «եթե Երեւանը և Բաքուն պայմանավորվեն ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ, կարծում եմ, բոլորը պատրաստ կլինեն աջակցելու նրանց»:

Մեկնաբանելով Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլ ծառայության ղեկավար Ռամիզ Մելիքովի այն հայտարարությունը, թե «25 տարի անց քարտեզի վրա Հայաստան չի լինի», դեսպան Էվանսը գայրացուցիչ է անվանել և հայտարարել, որ «այն հետ է բերել հայերի բոլոր վատ հիշողությունները»:

Ընդամենը երեք օր առաջ նախագահ Ջորջ Բուշի եվրոպական շրջագայության կապակցությամբ ԱՄՆ պետքարտուղարության տարածած տեղեկանքում ասվում էր. «Մենք ճանաչում ենք Մոլդովայի, Վրաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և համագործակցում ենք Մերձդնեստրի, Հարավային Օսիայի, Աբխազիայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների խաղաղ քաղաքական կարգավորմանն ուղղված միջազգային ջանքերն առաջ տանելու նպատակով»:

Չնայած ԱՄՆ-ը, ինչպես նաև Սինսկի խմբի համանախագահող մյուս երկրները կրկնում են, որ ճանաչում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, սակայն մյուս կողմից այդ պետությունները չեն կանխորոշում ղարաբաղյան կարգավորման բանակցությունների արդյունքները:

Այսինքն Բաքվի եւ Երեւանի կարգավորման յուրաքանչյուր պայմանավորվածություն ընդունելի է միջոնող երկրների համար:

2002 թ. դեկտեմբերի 11-ին «Էխո Մոսկվի» ռադիոկայանին տված հարցազրույցում Մինսկի խմբի ամերիկյան նախկին համանախագահ Ռուդոլֆ Փերինան հստակ տարանջատել էր դարաբաղյան խնդիրն ԱՊՀ տարածքում առկա մյուս հակամարտություններից: Փերինան ասել էր, որ Մերձդնեստրը պետք է Մոլդովայի մասը կազմի, Աբխազիան եւ Գարաբաղին Օսիան Կրաստանի, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի խնդիրն այլ է: Դեպքում Ջոն Էվանսի ամերիկահայերի հետ հանդիպմանն արած հայտարարությունը, թե «բոլորը հասկանում են, որ Ղարաբաղը չի կարող վերադարձվել Ադրբեջանին, քանի որ դա արեւտալի քայլ կլինի», ամենայն հավանականությամբ կարժանանա պաշտոնական Բաքվի քննադատությամբ:

Ի դեպ, ընդամենը երկու օր առաջ, ըստ Բաքվի ANS հեռուստաընկերության հաղորդագրության, Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռինո Զարնիչն իր դժգոհությունն է հայտնել Ադրբեջանի եւ Իրանի հարաբերությունների ջերմացման առնչությամբ: Դեսպան Զարնիչը նշել է, որ Իրանը պետական մակարդակով աջակցում է ահաբեկչությանը եւ ջանում է միջուկային զենք ստեղծել, լավ կլիներ, եթե Բաքուն հաշվի առներ այդ հանգամանքը:

Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսը Սան Ֆրանցիսկոյի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ «ցեղասպանություն» է անվանել 90 տարի առաջ Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց մեծ եղեռնը: «Այսօր ես կանվանեմ դա Հայոց ցեղասպանություն», ասել է նա՝ հավելելով, որ խորհրդակցել է ԱՄՆ պետքարտուղարության իրավաբանի հետ, որը հաստատել է, որ 1915 թ. իրադարձությունները «ձեւակերպմամբ ցեղասպանություն էին»:

Էվանսը նշել է, որ չնայած ամերիկյան վարչակազմի ներկայացուցիչները խուսափում են «ցեղասպանություն» տերմինն օգտագործելուց, նրանցից ոչ ոք չի ժխտել այն: «Մյուս կողմից, դեսպանը կարծիք է հայտնել, որ «մեզ ամերիկացիներին, հարիչ է բառախաղով զբաղվել այս դեպքում»: «Հայոց ցեղասպանությունն առաջին ցեղասպանությունն էր 20-րդ դարում... Մենք շատ սխալներ գործեցինք Առաջին համաշխարհային պատերազմից հետո», ասել է նա:

Ջոն Էվանսն ԱՄՆ-ում հանդիպել է նաեւ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանին: Ըստ «Մեդիամաքսի», Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը բարձր է գնահատել «Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ջոն Էվանսի ոչ երկիմաստ հայտարարությունները»: «Մենք նկատի ենք առնում այն փաստը, որ դրանք համընկել են ԱՄՆ վարչակազմում եւ ամերիկյան հասարակությունում Մ. Նահանգների նկատմամբ Թուրքիայի ներկայիս տրամադրությունների ըմբռնման նոր մակարդակի հետ», ասել է Համբարյանը:

## Հասարակական

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆՈՒՄ ՀՐԱՊՈՐՏԱԿԵՏ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ  
ԿՈՆՂԱԿԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱ  
ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ**

Փետրվարի 6-ին, Բուն Բարեկենդանին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Սուրբ եւ Ամնահ

Պատարագ: Պատարագիչն էր Ս. Ջավեն քնն. Սարկոսյանը:

Հընթացս Սուրբ Պատարագի «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո հանդիսավոր թափոռի ուղեկցությամբ Ս. Սեղան բարձրացվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 90-ամյա տարելիցին, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

«... Քրիստոսի հետ հարության հույսով, մահվան դեմ կյանքի հաղթության հավատով ապրեց ու ստեղծեց մեր ժողովուրդը: Դարերի մեջ բազում ավերներ ու հողմեր տեսավ, բազմիցս գերեզման իջավ, բայց Քրիստոսին հուսացյալ՝ հավատաց իր հոգու լույսին, իր փրկությանն ու վերածննդին: Միշտ հավատաց եւ իր պատմությամբ ու իր թողած ժառանգությամբ վկայեց, որ հարուցյալ է Քրիստոս, եւ հարուցյալ է Քրիստոսին հավատացողը: Այս հավատով վերապրեցինք մեր պատմության ամենամեծ ողբերգությունը՝ մեր ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում:

Առաջին համաշխարհային պատերազմի թոհ ու բոհի մեջ երիտթուրքական իշխանությունները ժամանակը պատեհ նկատեցին՝ ավարտին հասցնելու հայության բնաջնջման թուրքական պետության որդեգրած քաղաքականությունը եւ ընդմիշտ լուծելու հայկական հարցը: Արեւմտյան Հայաստանում՝ մեր Հայրենիքի մեծագույն հատվածի վրա եւ կայսրության հայաշատ այլ բնակավայրերում իրականացվեցին անգնեմ հայ բնակչության կազմակերպված ջարդեր: Մեր ժողովուրդը մահվան էր դատապարտվել միայն հայ եւ քրիստոնյա լինելու համար, քանզի հայ մնալ ու քրիստոնյա, նշանակում էր շարունակել լինել բնիկ ու տոհմիկ ժողովուրդը Հայաստան երկրի:

...Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ Հայոց Ցեղասպանությունը, մեր պատմության այս մեծագույն ողբերգությունը: Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ ավերակված խնկաբույր երկիրը մեր, հայրենական սրբություններն ու բազմադարյա հիշատակները: Մեզ հետ են մեր բյուրաւոր նահատակները՝ հայտնի ու անհայտ անուններով: Նրանց հիշատակի առջեւ միասին ենք միշտ: Մեզ հետ են ի պաշտպանություն մեր ժողովրդի բողոքի ազնիվ ձայն բարձրացրած մեծ մարդասերները, որոնց շուրթերից մարդկության խիղճն էր խոսում Եղեռնի մահասփյուռ օրերին: Մեզ հետ են այն ժողովուրդները, ովքեր մարդասիրաբար ապաստան տվեցին ջարդերից փրկված բեկորներին հայության:

...Մեծ Եղեռնի 90-ամյա տարելիցի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրինությունն ու ողջույնն ենք բերում աշխարհասփյուռ սիրեցյալ մեր ժողովրդին: Չեռք-ձեռքի ու սիրտ-սրտի միասին ենք հիշատակի առջեւ մեր անմեղ զոհերի, ովքեր իրենց աչքերը փակեցին մեր ժողովրդի վերածնության, մեր Հայրենիքի ազատության տեսիլքով: Հավատարիմ

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ

լինենք նրանց տեսիլքին: Որտեղ էլ ապրենք, փոխանցենք մեր զավակներին Արարատի պատկերը նվիրական, Լուսավորչի Կանթեղն անմար եւ հայրենի մեր հողն ու երկինքը միավորող Սուրբ Էջմիածնի խորհուրդը հավերժական: Որտեղ էլ ապրենք, համակ նվիրումով տեր կանգնենք մեր ազգային իղծերին ու ձգտումներին: Պաշտպանենք Արցախի ազատության իրավունքի, Հայոց Ցեղասպանության ճանաչման մեր արդար դատը: Միասնական ուժերով կառուցենք նոր կյանքը Հայաստանի ու Արցախի եւ հայրենի հողից առած ավյունով զորացյալ ու ծաղկուն պահպանենք Հայ Սփյուռքը: Ապրենք «Զի ինձ կեանք Քրիստոս է» վստահությամբ եւ հավատով՝ որ Աստված համախմբելու է մեզ Արարատի փեշերին: Տերը կամեցավ ազգիս հարությունը, որպեսզի հարատեւի Ավետարանի լույսով ու կյանքի սիրով աշխարհին բացված հայի հոգին, եւ հայերեն աղոթքը շարունակի երկինք բարձրանալ՝ հայցելով աշխարհին խաղաղություն եւ ի մարդիկ հաճություն: Հավատանք ի Քրիստոս սիրով զորացյալ առաքինագործ հոգու շնորհներին մեր կյանքում եւ հայոց միացյալ ու պայծառ գալիքին», -մասնավորապես ասված է Հայրապետական կոնդակում:

###

Ստորեւ ներկայացվում է Հայրապետական կոնդակն ամբողջությամբ:

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,  
ՈՂՈՐՍՈՒԹԵԱՍԲԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՍՕՔԸ  
ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ  
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՍԵԾԱՐ ԱՌՈՈՒՅ  
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ Դ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ  
ՕՐԴՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ  
ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,  
ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ  
ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ,  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ,  
ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԿԱՑ,  
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,  
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ  
ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ  
ՀԱԿԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ**

«Զի ինձ կեանք Քրիստոս է»

(Փիլ. Ա 21):

Հայոց հաւատի վէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որ ունենք պարզեւ մեզ երկնային ամենառատ շնորհով եւ օրհնութեամբ, գոհութեան աղօթք ու փառաբանութիւն ենք մատուցում Բարերար Աստծուն այսօր, երբ 90-ամեայ յիշատակութեան առջեւ Հայոց Մեծ Եղեռնի, ի Հայաստան եւ ի Սփիւռս վերածնուած ժողովրդով համարձակաձայն կարող ենք կրկնել առաքեալի խօսքը. «Զի ինձ կեանք Քրիստոս է»:

Արդարեւ, Քեզ ապաւինողը ամօթով չմնաց, Տէր, քանզի Դու ես Յարուցեալ, եւ Քո խօսքը՝ կենդանի ու կենդանարար ու յաւիտենական: Քեզ գիտենք իբրեւ ճշմարտութիւն, սէր եւ ողորմութիւն՝ Արարիչ ու Ամենախնամ, Ողորմած ու Փրկագործ: Քեզ գիտենք իբրեւ Ամոքիչ ու Առաջնորդող պահապան զօրութիւն: Մեր հայրերից այսպէս ուսանեցինք՝ փառաւորելով Քեզ՝ Միածին Որդուդ, Հօրը եւ Սուրբ Հոգուն:

Քրիստոսի հետ յարութեան յոյսով, մահուան դէմ կեանքի յաղթութեան հաւատով ապրեց ու ստեղծեց մեր ժողովուրդը: Դարերի մէջ բազում ակերներ ու հողմեր տեսաւ, բազմիցս գերեզման իջաւ, բայց Քրիստոսին յուսացեալ՝ հաւատաց իր հոգու լոյսին, իր փրկութեանն ու վերածննդին: Միշտ հաւատաց եւ իր պատմութեամբ ու իր թողած ժառանգութեամբ վկայեց, որ յարուցեալ է Քրիստոս, եւ յարուցեալ է Քրիստոսին հաւատացողը: Այս հաւատով վերապրեցինք մեր պատմութեան ամենամեծ ողբերգութիւնը՝ մեր ժողովրդի ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում:

Առաջին համաշխարհային պատերազմի թոհ ու բոհի մէջ երիտթուրքական իշխանութիւնները ժամանակը պատեհ նկատեցին՝ աւարտին հասցնելու հայութեան բնաջնջման թուրքական պետութեան որդեգրած քաղաքականութիւնը եւ ընդմիջտ լուծելու հայկական հարցը: Արեւմտեան Հայաստանում՝ մեր Հայրենիքի մեծագոյն հատուածի վրայ եւ կայսրութեան հայաշատ այլ բնակավայրերում իրականացուեցին անզէն հայ բնակչութեան կազմակերպուած ջարդեր: Մեր ժողովուրդը մահուան էր դատապարտուել միայն հայ եւ քրիստոնէայ լինելու համար, քանզի հայ մնալ ու քրիստոնէայ, նշանակում էր շարունակել լինել բնիկ ու տոհմիկ ժողովուրդը Հայաստան երկրի:

1915 թուականին ակերն էր թագաւորում, սարսափն ու մահը՝ հայոց բնակավայրերում: Փլուում էր տունը հայի գլխին, այրուում էր հողը իր մշակի ոտքի տակ, ակօսը գերեզման էր դառնում, եկեղեցին՝ անբարբառ յուշարձան: Եփրատի ափերից մինչեւ Արաքսի հովիտներ, Սեւ ծովից մինչեւ Միջերկրական՝ ձորերը լցուեցին հայ մարդկանց դիակներով, գետերը՝ արիւնով: Թալանուած ու տանջահար անզէն ժողովուրդը՝ կին, մանուկ ու ծեր քշուեցին անջուր անապատ, եւ նրանց վերջին աղօթքի ունկնդիրը եղաւ տօթակէզ քամին: Անլուր ջարդերին զոհ գնաց մէկ ու կէս միլիոն հայութիւն, որը հողագործ էր,

արհեստաւոր, կառուցող շինարար, վաճառական, բժիշկ ու գիտնական:

20-րդ լուսաւորեալ դարը եղեռնով սկսուեց մեր ժողովրդի համար, որ նոր ժամանակներում յոյս ունէր գտնել անձի ապահովութիւն, մարդկային իրաւունքի պաշտպանութիւն եւ խաղաղ կեանք: Այս էր Հայկական հարցի բովանդակութիւնը: Սահմանադրական իրաւունքներից խօսող երիտօրրքական իշխանութիւնները ամեն բան հաշուարկել էին՝ չկայ ժողովուրդ, չկայ Հայկական հարց, չկայ ժառանգորդ, չկայ՝ պահանջատէր: Չարահմար ծրագրի հեղինակները վստահ էին, որ իսպառ պիտի բնաջնջուի հայութիւնը, երկրէ-երկիր ցրուելով՝ անյիշատակ ու անհետ պիտի վերանայ պատմութեան ասպարէզից: Ամեն բան հաշուարկել էին, բայց ոչ՝ Աստուծոյ նախախնամութիւնը եւ Աստուծոյ յուսացեալ ժողովրդի ապրելու եւ արարելու կամքն ու զօրութիւնը:

Նոյն ջարդարարների արշաւանքներին դիմակայելով՝ ընդդէմ մահու խիզախումով հերոսացած՝ փրկուեց Արեւելեան Հայաստանի փոքրիկ հողակտորը, որի վրայ հաստատուեց հայոց նոր պետականութիւնը: Մեր ազատ երկրի դրօշի ներքոյ Ծիծեռնակաբերդի բարձունքում Արարատահայեաց վեր է յառնել Մեծ Եղեռնի յուշակոթողը, որտեղ լուսեղէն զօրաց գնդերով հոգիներն են երկրի վրայ մեր հողը սրբացրած եւ երկնքում Աստուած փառաբանող մեր նահատակների եւ որտեղ ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի միասին է ազգս հայոց: Յաւերժատես այս բարձունքին մեր ցաւն ու արդար ցասումը զօրութիւն դարձաւ եւ ծնունդ առաւ Արցախեան յաղթանակող ոգին:

Փառք քեզ, ժողովուրդ սիրելի, որ չերկնչեցիր մահուան քրքիջից: Խաչդ ուսած անցար Գողգոթայի ճանապարհներով եւ յարութիւն առար յաղթանակած:

Փառք քեզ, ժողովուրդ սիրելի, որ վերջը սրտիդ բնաւեր տունդ վերստին կառուցեցիր Հայրենիքիցդ հեռու եւ մօտիկ բազում երկրներում եւ շարունակեցիր հայ մնալ ու քրիստոնեայ: Արարող հանճարով շարունակեցիր հաց ստեղծել, կառուցել, գիտութեան ու մշակոյթի բարձունքների հասնել եւ այսպէս ճանաչուած ապրել:

Երիցս փառք քեզ, ժողովուրդ սիրեցեալ, «Ձի ինձ կեանք Քրիստոս է» հաւատով քայլեցիր դէպի քո կեանքի նոր այգաբացը, եւ յուսացիր իրաւունքի ու արդարութեան դարի նոր առաւօտը ու այս ճանապարհին մնացիր կանգուն ու արի:

Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ Հայոց Ցեղասպանութիւնը, մեր պատմութեան այս մեծագոյն ողբերգութիւնը: Չենք մոռացել ու չենք կարող մոռանալ աւերակուած խնկաբոյր երկիրը մեր, հայրենական սրբութիւններն ու բազմադարեայ յիշատակները: Մեզ հետ են մեր բիւրաւոր նահատակները՝ յայտնի ու անյայտ անուններով: Նրանց յիշատակի առջեւ միասին ենք միշտ: Մեզ հետ են ի պաշտպանութիւն մեր ժողովրդի բողոքի ազնիւ ձայն բարձրացրած մեծ մարդասէրները, որոնց

շուրթերից մարդկութեան խիղճն էր խօսում Եղեռնի մահասփիւռ օրերին: Մեզ հետ են այն ժողովուրդները, ովքեր մարդասիրաբար ապաստան տուեցին ջարդերից փրկուած բեկորներին հայութեան:

Անցել են ժամանակները, երբ մեր հայրերը չէին կարող ոգեկոչել յիշատակը մարտիրոսացած հայորդիների, երբ միայնակ էին ազգային ողբերգութեան ու վշտի մէջ: Այսօր շատ ազգեր ու պետութիւններ ճանաչում են մեր ժողովրդի հանդէպ գործուած ոճիրը՝ իբրեւ յանցանք մարդկութեան ու մարդկայնութեան դէմ: 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը պիտի ճանաչուի ու դատապարտուի ողջ աշխարհի ու նաեւ Թուրքիայի կողմից, այն համոզումով, որ բռնութիւններն ու սպանութիւնները չեն կարող առաջնորդել մարդկութեան ճանապարհը: Խաղաղութիւնն ու ազատ կեանքը, եղբայրութիւնը մարդկանց ու ազգերի միջեւ, արդարեւ, երազն է բոլոր ժողովուրդների:

Մեծ Եղեռնի 90-ամեայ տարելիցի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք բերում աշխարհասփիւռ սիրեցեալ մեր ժողովրդին: Ձեռք-ձեռքի ու սիրտ-սրտի միասին ենք յիշատակի առջեւ մեր անմեղ զոհերի, ովքեր իրենց աչքերը փակեցին մեր ժողովրդի վերածնութեան, մեր Հայրենիքի ազատութեան տեսիլքով: Հաւատարիմ լինենք նրանց տեսիլքին: Որտեղ էլ ապրենք, փոխանցենք մեր զաւակներին Արարատի պատկերը նուիրական, Լուսաւորչի Կանթեղն անմար եւ հայրենի մեր հողն ու երկինքը միաւորող Սուրբ Էջմիածնի խորհուրդը յաւերժական: Որտեղ էլ ապրենք, համակ նուիրումով տէր կանգնենք մեր ազգային իղձերին ու ձգտումներին: Պաշտպանենք Արցախի ազատութեան իրաւունքի, Հայոց Ցեղասպանութեան ճանաչման մեր արդար դատը: Միասնական ուժերով կառուցենք նոր կեանքը Հայաստանի ու Արցախի եւ հայրենի հողից առած աւիւնով զօրացեալ ու ծաղկուն պահպանենք Հայ Սփիւռքը: Ապրենք «Ձի ինձ կեանք Քրիստոս է» վստահութեամբ եւ հաւատով՝ որ Աստուած համախմբելու է մեզ Արարատի փեշերին: Տէրը կամեցաւ ազգիս յարութիւնը, որպէսզի յարատեւի Աւետարանի լոյսով ու կեանքի սիրով աշխարհին բացուած հայի հոգին, եւ հայերէն աղօթքը շարունակի երկինք բարձրանալ՝ հայցելով աշխարհին խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն: Հաւատանք ի Քրիստոս սիրով զօրացեալ առաքինագործ հոգու շնորհներին մեր կեանքում եւ հայոց միացեալ ու պայծառ գալիքին:

«Հաստատուն կացք, զտեղի կալիքի, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զգեցեալ զգրահսն արդարութեան» (Եփես. 2 14):

*ԳՐԵԳՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ՏՈՒՆ ԿՈՆՏԱԿՍ Ի 3-Ն Փետրուարի յամի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՌՆԾԴ ի տօնի Արքեպարքանաց զօրավարացն՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն ի Մայրավանս Արքեպարքանի ընդ համարաւ 285*